

«ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ» 201-ՐԴ ՀԱՏՈՐԸ

Հայկական տպագրության սկզբնական շրջանը մութ ու առեղծվածային շատ կողմեր ունի, և այդ այն պատճառով, որ տպարանները գտնվել են մեր հայրենիքից հեռու: Տպագրիչների գործունեության վերաբերյալ թղթերը կամ մնացել են օտար դիվաններում կամ էլ կորել են: Մինչև այժմ էլ հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի մասին ստույգ տեղեկություններ չունենք: Քիչ բան էր հայտնի նաև XVII դարավերջի և XVIII սկզբների ամստերգության տպագրիչներ Վանանդեցիների մասին: Շուրջ երկու դար հետո միայն հայտնի դարձավ, որ Անտվերպենի քաղաքային դիվանում, Օթսֆորդում և այլուր պահպանվել են հայերեն ու լատիներեն մի շարք գրություններ, նամակներ, հանձնարարականներ, որոնք վերաբերում են այդ երախտավոր գործիչներին, մասնավորապես Թովմաս Վանանդեցուն: Անտվերպենում պահպանվող թղթերի մասին առաջին անգամ հրապարակային խոսք է ասել բելգիացի բանասեր Ժյուլ Վաննեյուսը՝ 1906 թ. Բրյուսելի «Հանդես Բելգիայի գրադարանների և դիվանների» ֆրանսերեն պարբերականում: Նրեք տասնամյակ հետո նրա հետքերով գնաց Առաքել Սարուխանն իր «Բելգիան և հայերը» ուսումնասիրության (Վիեննա, 1937 թ.): Բայց որովհետև Վանանդեցիների գործունեությունը մասնակիորեն էր առնչվում Սարուխանի ընտրած նյութին, ուստի նա չի խորացել այդ հարցի մեջ:

Եվ ահա Վանանդեցիների գործունեության հիմնավոր քննությամբ հանդես է եկել ղոկտոր Մեսրոպ Ժ. Վ. Գրիգորյանը: Վերջերս Վիեննայում, նախ՝ «Հանդես Ամստերդամ»-ում, ապա «Աղ-գային մատենադարան» մատենաշարով լույս ընծայվեց նրա «Նոր նյութեր և դիտողություններ հրատարակիչ Վանանդեցվոց մասին» ուսումնասիրությունը, ուր ոչ միայն մանրամասն վերլուծվել են արդեն հայտնի փաստաթղթերը, այլև հայտնաբերվել ու բանասիրությանն է ներկայացվել մի շարք նոր նյութեր:

Էջ առ էջ թերթելով այդ թղթերը, տքնաշան բանասերը վերծանում է օտար ու հայազգի գործիչների գրությունները, հանձնարարականները, նամակները՝ ուրվագծելով Վանանդեցիների, հատկապես Թովմասի գիտակցական կյանքի շուրջ հիսուն տարիների պատմությունը, ցույց տալով այն մեծ դերը, որ խաղացել է տպագրիչների այդ նշանավոր տոհմը հայկական գրատպության և մշակույթի առաջընթացի ասպարեզում:

Երկար ժամանակ, տեղեկություններ չլինելու պատճառով, հայ տպագրության պատմություններում կամ ջրանցվում, կամ կրկնվում էր այն ենթադրությունը, թե, իբր, Թովմաս Վանանդեցին կյանքի վերջին տարիներին անգործության է մատնվել: Անտվերպենյան փաստաթղթերը հաստատում են, որ ծերունի Թովմասը ոչ միայն չի հրաժարվել գործելուց, այլ ամենահռոնդուն ճիգերն է թափել տպարանը կանգուն պահելու համար:

Եվորպական մայրցամաքում շոքափնիլ օգնություն չստանալով, հուսահատ հրատարակիչը իր հայացքն ուղղել է դեպի հյուսիս՝ Անգլիայի թագուհուց օժանդակություն ստանալու հույսով, սակայն այստեղից էլ, ըստ երևույթին, ձեռնունայն է վերադարձել և ճանապարհին, Անտվերպենում, 1708 թ. սեպտեմբերի 8-ին, միայնակ ու լքված, տպարանը հայրենիք տեղափոխելու բաղձանքը սրտում, ընդհատվել է նրա կյանքի թելը:

Թովմասի կյանքի այս վերջին ժայրից սկսելով իր հետազոտությունը և ղնալով դեպի ետ, ղոկտոր Գրիգորյանը մեր առջև բացում է այնպիսի իրողություններ, որոնք ուշագրավ են ոչ միայն տպագրության, այլև մեր ողջ մշակույթի, պատմության, լեզվի անցյալը ուսումնասիրելու առումով:

Սովորաբար հայ նոր դպրոցի պատմությունը ուսումնասիրողները սկսում են XVIII դարավերջին և XIX-ի սկզբներից հայկական գաղթավայրերում բացված դպրոցներով: Անտեսվում են գրանից մոտ կես դար առաջ բուն հայրենիքում, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի և նրա համախոհների այդ ուղղությամբ թափած ջանքերը: Դեռևս 1650—70 թթ. գիտության և գրքի սիրահար Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի քաջալերանքով Եվրոպա մեկնած Մատթեոս Մարեցին, Ոսկան Երևանցին, ապա և Թովմաս Վանանդեցին մեկ ընդհանուր նպատակ են հետապնդել. խավարի մեջ խարխափող և օտար բռնակալության ճիգներում հեծող հայրենի աշխարհում նոր սկզբունքներով դպրոցներ հիմնել, գրագիտություն և ուսում տարածել: Գուտեմբերգյան գյուտի լայն տարածման դարում այսպիսի ձեռնարկությունը անհնար էր առանց տպագրական մամուլի ձեռք

բարոյական նուէրով, որովհետեւ ծերունի Եպիսկոպոսին շնորհած են համալսարանական բարձրագույն պատուոյ տիտղոսը» (էջ 69)։

Եթե Թովմասը դրամական շոշափելի օգնութիւն ստացած լինէր, չէր թարցնէր, և հնում ընդունված կարգի համաձայն, իր տպագրած գրքերի հիշատակարաններում կամ այլուր կասեր այդ մասին։

Հայազգի գրասերների օգնութիւնը ևս խորհրդածելու առիթ է տալիս։ Հայկական տպագրութիւնը շատ է պարտական բարեպաշտ մեկնասերին, որոնց ակնկալածը լոկ ժամանակակիցների ու գաղտ սերնդի մաղթանքն է եղել։ Թովմասի գրքերից մի քանիսը նույնպէս տպագրվել են ջուղայեցի այդպիսի խոշաների ծախսով («Գանձ չափոյ, կշռոյ...», «Պաշտօն աստուածային» և այլն)։ Սակայն անվանի տպագրիչը շրջապատված է եղել ավելի շարակամներով, քան բարեկամներով։ Թե ի՞նչ օր է նա քաշել ի մերայնոց ուսումնաստեաց, հասապազաստ և շարարուեստ արանց» ձեռքից, կարելի է պատկերացնել վերընթեռնելով Խորենացու «Պատմութիւն» հիշատակարանը։

Ըստ հիշատակարանների ու տիտղոսաթերթերի տեղեկութիւնների, Վանանդեցիների տպարանի առաջին տասնամյակի գրքերի մեծ մասը կատարվել է «տպիւք և ծախիւք եռամեծ րարունոյն Թօմայ Վանանդեցու»։ Արդ, ո՞րտեղից է վերցրել Թովմասը այդ միջոցները։ Կարծում ենք, որ այդ մասին նա հոգ է տարել դեռևս հայրենիքում, Եվրոպա մեկնելուց առաջ։ Այս հետևությունը կարելի է հանգել թեկուզ հետևյալ փաստից։ Իր ուսումնասիրութիւն վերջում բերելով Հակոբ Զուղայեցու կողմից Թովմասին տրված երեք գրութիւնները ժողովարարութիւն անելու վերաբերյալ, Մ. Գրիգորյանը դրանցից երրորդի մասին, համոզիչ փաստարկներով, հետևյալն է գրում. «Այս նամակը բացայայտօրէն համադրութիւնն է նախորդ երկու կոնդակներու, և հետևարար կրնայ Թովմասու կողմանէ հնարուած ըլլալ» (էջ 134)։ Հարց է առաջանում, Եվրոպա գնալու և իր ծրագրերը իրականացնելու նպատակով չէ՞ արդյոք Թովմասը դիմել այս միջոցներին։ Բացառված չէ նաև, որ լուսամիտ Հակոբ կաթողիկոսը կարող էր համաձայն լինել ժողովարարութիւնը հավաքված գումարների մի մասը ապագա տպարանին հատկացնելու։

Այս դժվարին, կաթողիկոսական դիվաններում և հայկական այլ աղբյուրներում երկար պերպրտումներ պահանջող խնդիրների հետ ցանկալի է, որ դոկտոր Գրիգորյանի ապագա մենագրութիւն մեջ տեղ գտնեն հետևյալ հարցերը ևս. Թովմաս Վանանդեցու ծննդյան թվականը և ուսումնառութիւնը, Վանանդեցիների առնչութիւնները մի կողմից Ոսկան Երևանցու, ուրիշ հայ դործիչների, Հակոբ Զուղայեցու ու նրա հաջորդների, մյուս կողմից՝ փիլիսոփա Լայրնիցի, լեզվաբան Սքրոդերի, հոլանդական իշխանութիւնների և տպարանատերերի հետ։ Կարևոր պարագաներ են նաև տպարան բացելու իրավունքը, տպագրական սարքավորման, բանվորական ուժի, թղթի ձեռքբերումը, ինչպէս և գրքերից ստացած եկամտի չափը։ Եթե, օրինակ, ներկայումս Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագիր Ավերդեկում գրված ավետարանը 1666 թ. ունի Մարգարիտ գնել է՝ վճարելով երկու եզ, երկու ձի և մեկ կով, ապա որքան է արժեքել նույն ժամանակներում տպագիր որևէ գիրք։ Եվրոպական տպագրութիւնների պատմութիւն փաստերը, գուցե հեշտացնեն գտնել պատասխանները այս հարցերից շատերի, որոնց միշտ այժմ չի անդրադարձել հայ բանասերներից ոչ մեկը։

Ցանկալի է նաև, որ հավելվածաբար բերվող օտարալեզու հանձնարարականները և այլ գրութիւններ զուգահեռաբար թարգմանվեն հայերեն, մի աշխատանք, որ կգյուրացնէր դրանցից օգտվողների գործը։

Հ. Մ. ԴԱՎԹԵԱՆ